ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

(Կաթողիկոսական պատվիրակ
Հարավային Ամերիկայի հայոց)

ՈՂՋՈՒՅՑՆԻ ԽՈՍՔ

«Քանզի ի վերայ Աչոյն և Էջմիածնի
ամենայն ազգն հայոց կապեալ կան»։

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑԻ



Իրելի՛ ժողովուրդ հայոց. Հանուն Աստուծո և մեր Վեհափառ Հայրապետին, կողջունեմ զձեզ սիրով։ Կողջունեմ Հարավային Ամերիկայի ամբողջ հայ ժողովուրդը ընդհանրապես և այսօր մասնավորապես Բուենոս-Այրեսի և շրջակայքի մեր սիրելի ժողովուրդը։

Կողջունեմ Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցվո եկեղեցական դասը, մեր հոգևոր եղբայրները, վարչությունը, պաշտոնեությունը և բոլոր ծառաներն ու սպասավորները և այս եկեղեցվո բոլոր համայնքը։ Ու կմաղթեմ, որ այս օրը շնորհաբաշխության օր մը ըլլա, վերածնունդի նոր շրջան մը սկսի, պտղաբերելու համար Աստուծո շնորհքով և մեր Վեհափառ Հայրապետի օրհնությամբ։

Վստահ եմ, թե երկյուղածությամբ ու հարգանքով ունկնդրեցիք ամենուս հոգևոր Հոր՝ Վեհափառ Հայրապետին Ամենայն Հայոց իմաստալից ու սրբատառ կոնդակը։ Նորին Վեհափառությունը նախ կողջունե զձեզ հայրական սիրով ու գնահատանքով հիշելով, թե Հարավային Ամերիկայի հայ գաղութը, «ազգասեր, եկեղեցասեր և հայրենասեր ժողովուրդ մըն է, որ կհարգե իր Եկեղեցին, կրոնական ու ազգային ավանդություններն ու սրբությունները», և կօրհնե զձեզ ամենքդ։ Ու ապա մեզի կպատվիրե հիշեցնելով, թե Հարավային Ամերիկայի գաղութը կբաղկանա շորս հատվածներե կամ կեդրոններե, այսինքն՝ Բուենոս-Այրես, Գորդոբա, Մոնտեվիդեո և Սան-Պաուլո, ու կհրահանգե մեզի՝ շորս կեդրոնները միացնել և վերածել մեկ վիճակի, և պատրաստել մեկ ընդհանուր կանոնադրություն՝ իր վավերացումն ստանալե վերջ։

Երկրորդ պատվերը Վեհափառ Հայրապետին՝ շատ ավելի ծանր պարտականություն կդնե մեր ուսերուն վրա։ Վեհափառ Հայրապետը ազգապահպանման, հայ մշակույթի, հայ լեզվի հավերժացման համար մասնավոր հրահանգներ ունի մեզի և ձեզի ուղղված։ Նախ կհրահանգե մեզի՝ զարգացնել հայրենասիրական ոգին՝ դասախոսություններով. հայ լեզուն վառ պահել հայ ընտանիքին մեջ. հայ մշակույթը ծաղկեցնել, ու մասնավորաբար ձեզի՝ որ ձեր պարմանի զավակները՝ ուստերն ու դուստրերը հեռու մնան օտար ամուսնություններե, որպեսզի հայ ընտանիքը անաղարտ մնա։ Եվ ապա մեզի կհրահանգե կազմակերպել այս վիճակը. միություններ կազմել և աշխատիլ այս գաղութի հոգևոր և ազգային բարգավաճման, պայծառության և հառաջացման համար։ Երբ միություններ կըսենք, չենք հասկնար պարզ հանձնախումբեր։ պիտի ըլլան Տիկնանց և Երիտասարդաց եկեղեցվո միություններ։ Վեհափառ Հայրապետը, ուրիշ խոսքով, կտեսնեք որ մեր Եկեղեցվո պատմական, նվիրական և սրբազան դերը կշեշտե։

Ճշմարտություն է, որ գաղութահայության մեջ, մեր ազգային կյանքի կեդրոնը, վառարանը Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին է։ Հո՛ն է, որ մեր պանդուխտ հայ ժողովուրդը

կարոտը կառնե Հայրենիքին, Հայաստանին։ Հո՞ն է, որ լույս կստանա անիկա Լուսավորչի լույսեն։ Հո՞ն է, որ անիկա իր երազներուն, իր ազատության ու իր հոգևոր կյանքին հրազներուն իրականացումը կտեսնե։ Ու մեր Եկեղեցին, մեր հոգևոր մայրը, վառարանն է ո՛չ միայն մեր հոգևոր կյանքին, այլև մեր ազգային մշակույթին։ Անոր նվիրական կամարներուն տակ է, որ կհնչե Սահակի, Մեսրոպի մեծասքանչ ոսկեղեն լեզուն։ Անոր կամարներուն տակ է, որ կլսենք աղոթքները Լուսավորչին, Սահակին, Մեսրոպին, Նարեկացիին և Շնորհալիին։ Հո՛ն, անոր սրբազան կամարներուն տակ է, որ կհաղորդվինք հոգիներուն մեր սրբազան հայրապետներուն, որովհետև Հայաստանյայց Եկեղեցին դաղութներու մեջ առանցքն է մեր ազգային կյանքի հավերժացման։

Օրինակ մը տված ըլլալու համար, ինչպես որ մեզի ծանոթ է, տիեզերքի կեդրոնն է արեգակը. մոլորակներն անոր շուրջ կդառնան, եթե անկե փրթին՝ անդունդը կիյնան և կկործանին. միշտ իրենց ծիրին մեջ կդառնան և սակայն արևը ունի թե՛ կեդրոնախույս և թե՛ կեդրոնաձիգ զորություն։ Այդպես նաև Հայաստանյայց Եկեղեցին վառարանն է ու կեդրոնական առանցքն է մեր ազգային կյանքին։ Մեր բոլոր ազգային կազմակերպությունները, հայրենակցական միությունները և որևէ կազմակերպություն, որ հայ անունը կկրե, պետք է որ կապվի Հայաստանյայց Մայրենի Եկեղեցիին. ուրիշ խոսքով՝ այդ մեծ արևին, այդ արեգակին առանցքին մոլորակը կդառնա՝ որպեսզի իր գոյությունը իրականացնե և արդյունավորե։ Կամ ուրիշ օրինակով մը, ինչպես որ շղթայի օղակները արժեք ունին երբ շղթային հետ կապված են, այնպես նաև մեր ազգային կյանքի փոքր կազմակերպությունները հայ կյանքի ոսկեղեն շղթայի օղակներն են, այդ օղակները պետք է որ շղթային մաս կազմեն, որպեսզի շղթան զորավոր ըլլա։

Ուրեմն, Վեհափառ Հայրապետը մեզի կհրահանգե մասնավորաբար մշակել հայ լեզուն, կազմակերպել միություններ տիկնանց և երիտասարդաց, հայ ավանդություններն ու սրբությունները հավատարմությամբ պահելու։ Մենք այսօր կուզենք ձեզի ըսել, սիրելի՛ ժողովուրդ, ընդառաջ երթալով Վեհափառ Հայրապետի բարձր հրամանին, ունինք ծրագիրներ այս գաղութը կազմակերպելու համար։ Մեր առաջին գործերեն մեկը պիտի ըլլա՝ բարձրացնել ուսման մակարդակը մեր ազգային դպրոցներուն, որուն համար պետք պիտի ըլլան նոր ծրագիրներ և դասագիրքեր։

Մեր աշխատանքը պիտի ըլլա կազմել Եկեղեցվո երկսեռ և կամ երկրորդական վարժարան մը հայ ուսման համար, որպեսզի ձեր զավակները, պատանիներն ու երիտասարդները հայ հոգիով, հայ մշակույթով կրթվին և հայ ապրին։

Մեր աշխատանքը պիտի ըլլա կազմել Եկեղեցվո ընդհանուր երիտասարդաց միություն մը, մեր բոլոր երիտասարդներեն ու պատանիներեն կազմված, առանց որևէ խտրության, նոր սերունդը հավաքելու համար Եկեղեցվո շուրջ, զանոնք դաստիարակելու մեր հայրերու հավատքով, ներշնչելու՝ Հայ Եկեղեցվո լույսովը և հայ հոգիով։

Երրորդ՝ կազմել ընդհանուր եկեղեցասեր տիկնանց միություններ, ո՛չ թե հանձնախումբեր։ Բոլոր հայ տիկիններ պետք է անդամ ըլլան ո՛չ միայն եկեղեցիին, այլև Եկեղեցասեր տիկնանց միության. իրենց ծողովներուն ընթացքին հոգևոր և բարոյական դաստիարակչական բանախոսություններով հոգևոր կյանքը պիտի մշակվի իրենց մեջ, Եկեղեցին պայծառացնելու համար։

Չորրորդ՝ մեր փափագն է, ունենալ կիրակնօրյա վարժոց մը մանուկներու համար կամ ծաղկոց մը, որպեսզի ձեր պզտիկ զավակները, մանուկները փոդոցները չթափառին և կիրակի օրեր հավաքվին եկեղեցիի շենքին մեջ, սորվելու համար պատարագի սրբազան երգեցողությունը և ըլլալու հարազատ զավակներ Հայ Եկեղեցվո։

Երրորդ պատվերը, զոր Վեհափառ Հայրապետը մեզի կուտա, այն է թե, պետք է ջանք թափենք, որպեսզի Մայր Աթոռ կամ Հայրապետական Աթոռի և հայրենիի երկրի ու գաղութահայության կապը զորավոր և ամուր դառնա։ Ուրիշ խոսքով՝ գաղութահայությունը պետք է որ հոգևոր, ապառեին, իմացական կապերով կապվի Մայր Աթոռին և Հայրենիքին։

Որևէ ազգ, ազգ չէ՝ եթե չունի Հայրենիք ու հայրենի հող։ Անոր համար է, որ վակատուն ժողովուրդներ ազգ չեն։ Ժողովուրդ մը որպեսզի ազգ ըլլա, պետք է ունենա իր Հայրենիքը, իր սեփական Հայրենիքը։ Ինչպես որ ծառ մը օդին մեջ արմատ չի նետեր, այլ պետք է բարեբեր հող ունենա՝ որպեսզի ծառը արմատներ բռնե, աճի և ուռճանա, նույնպես և ժողովուրդ մը պետք է, որ իր ոտքին տակ հող ունենա, որպեսզի արմատ բռնե, աճի, ուռճանա և հավերժանա։

Հայ ժողովուրդի ծառին արմատները հայրենի հողին վրա տնկված են։ Գաղութահայությունը այդ հայկական ծառին ճյուղերն է. և ինչպես որ երբ ծառին ճյուղերը կկտրվին իրենց բունեն և արմատեն, կչորնան, նույնպես նաև գաղութահայությունը եթե

կտրվի իր հայրենի ծառեն՝ պիտի չորնա ու մեռնի։

Հայ ժողովուրդը դարերով իր թափառական ու գաղթական կյանքի մեջ միշտ կապված է Հայրենիքին և Ս. Էջմիածնին։ Ինչպես մեր բնաբանին մեջ հիշեցինք, 17-րդ դարու մեր պատմիչներեն Առաքել վարդապետ Դավրիժեցի, երբ կպատմե Շահ Աբասի արշավանքը Հայաստանի վրա, որ հայ ժողովուրդը գաղթեցուց դեպի Պարսկաստան, բայց հայեր մինչև վերջ հիշեցին Էջմիածինն ու Հայաստանը ու չմոռցան զայն՝ և պատմիչը կըսե. «Որովհետև հայ ժողովուրդը միշտ կապված մնաց Ս. Լուսավորչի Աջին և Ս. Էջմիածնին» ու հայությունը ուր որ գացած է, իր առաջին գործը եղած է կառուցանել հայ եկեղեցի մը՝ Էջմիածնի ոճով, հայ ճարտարապետությամբ, որ ըլլա պատկերը և մանրանկարը Ս. Էջմիածնի։ Եվ երկրորդ՝ անոր հովանիին տակ բացած է հայ դպրոց մը, որպեսզի իր զավակները սորվին Ս. Մեսրոպի լեզուն և Լուսավորչի հավատքը և մեր հայ ազգային պատմությունը։ Հայ ժողովուրդը, հրեա ժողովուրդին պես, ուր որ գացած է՝ ուխտած է՝ բնավ չմոռնալ իր Հայրենիքը և իր հոգևոր կեդրոնը, ինչպես որ հրեաները կըսեն. «Եթէ մոռացայց զքեզ Երուսաղէմ, մոռացի զիս աջ իմ»։ Իսրայել իր գերության օրերուն ուխտեց բնավ չմոռնալ Ս. Երուսաղեմը, նույնպես հայ ժողովուրդը իր դարավոր նժդեհ և գաղթական կյանքին մեջ, միշտ ուխտեց՝ ըսելով, «Եթէ մոռացայց զձեզ Էջմիածին և Հայաստան, մոռացի զիս աջ իմ։ Իմ աջ ձեռքս թող մոռանա զիս, ուրանա զիս՝ եթե մոռանամ զձեզ»։ Ու հայ ժողովուրդը հավատարիմ մնաց Մայր Աթոռին, Ս. Էջմիածնին և հայրենի երկրին։

Այսօր, սիրելի՛ ժողովուրդ հայոց, մեզի համար երջանկության և շնորհաբաշխության օր մըն է։ Վեհափառ Հայրապետը ինծի և ձեզի մասնավոր շնորհք կբաշխե. իր հայրական օրհնություններն ու հայրապետական մաղթանքները և իր իմաստուն հրահանգները և պատվերները կուտա. որով ձեզի կթելադրե, սիրելի՛ ժողովուրդ, որպեսզի ձեր ամբողջ սիրտով, ձեր բովանդակ հոգիով սիրեք Հայաստանյայց Մայրենի Եկեղեցին։ Սիրեցե՛ք հայ ազգը, սիրեցե՛ք Հայաստանը, սիրեցե՛ք Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, և բոլոր հայերը, աշխարհի մեջ ուր որ ալ գտնվին անոնք, այսինքն՝ ձեր եղբայրներն ու քույրերը. վասնզի ուր ալ գտնվին անոնք, ինչ դաղափարի ալ որ ծառայեն, մեր եղբայրներն և քույրերն են անոնք։ Ինչպես որ մարմնի անդամները չեն կրնար ապրիլ եթե բաժնվին մարմինեն, կամ կտրվին անկե, նույնպես նաև ազգին զավակները կմեռնին՝ եթե կտրվին և բաժնվին ազգեն։

Այս մաղթանքներով, սիրելի՛ ժողովուրդ, ուխտենք այսօր մեր սրտի խորեն, նախ հնազանդիլ Վեհափառ Հայրապետին Ամենայն Հայոց, գործադրել իր պատվերները և իր իմաստուն հրամանները. երկրորդ՝ հարգենք Հայաստանյայց Եկեղեցին, սիրենք զայն։ Սիրեցե՛ք և հարգեցե՛ք ձեզի համար ծառայող ձեր հոգևոր հայրերը, եկեղեցվո պաշտոնյաները. հնազանդեցե՛ք ձեր առաջնորդներուն. աղոթեցե՛ք անոնց համար. անոնց պատվերներուն և հրահանգներուն հպատակ եղե՛ք և հետևեցե՛ք անոնց, որպեսզի անոնք կարենան ձեր փրկության, ձեր երջանկության համար աշխատիլ՝ հրճվանքով և ուրախությամբ։ Անոնք կաշխատին ձեզի համար։ Որևէ եկեղեցական ծառա է Աստուծո Եկեղեցիին և ժողովուրդին։ Անոնք հայր են ձեզի, եղե՛ք անոնց հարազատ զավակներ, որպեսզի անոնք ալ կարենան ձեզի իրական հայրեր ըլլալ, աշխատելու համար ձեր հոգիներու փրկության, ձեր երջանկության և ձեր զավակներու ապագային համար։

Այս հավատքով, սիրելի՛ ժողովուրդ իմ, կօրհնեմ զձեզ հանուն Աստուծո և Վեհափառ Հայրապետին։ Կօրհնեմ զձեզ հավատքով Լուսավորչին, Սահակին և Մեսրոպին։ Կօրհնեմ զձեզ հայ Եկեղեցվո շնորհքներովը, Հայ Եկեղեցվո հավատքովը, որպեսզի ըլլաք երջանիկ և ձեր երջանկությունը գտնեք Եկեղեցվո մեջ, սիրելով զայն, հավատարիմ ըլլալով Ձեր Եկեղեցիին և ձեր ազգին, ու իբրև եղբայրներ, երբ այս եկեղեցիի շեմքեն ներս ոտք կկոխեք, մոռնաք գաղափարի տարբերություններ, քով-քովի նստիք իբրև եղբայրներ ու աղոթեք միասին և երջանիկ ըլլաք և քրիստոնեական սերը և խաղաղությունը տարածվի ամենուս վրա, ու դուք հպարտ, ազատ ու երջանիկ ապրիք։

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եղիցի ընդ ձեզ. ամէն։

(Բուենոս-Այրես, «ՀԱՅ ԿԵԴՐՈՆ» ամսագիր)